20 ՓԱՐԱ (Ծ'ՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ [illegible] ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

# ԱՐԵՒԵԼՔ
## ՕՐԱԳԻՐ
### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ (Ծ'ՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
[illegible] 160 / 80 / 40 / 240 / 120 / 58 / 26

Les annonces sont reçues à l'Eastern Agency place Karakeuy Deïrmen Han Constantinople

Կ. ՊՈԼԻՍ, 16 ՅՈՒԼԻՍ, 1887

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

### ԹՈՒՐՔԻԱ, ՖՐԱՆՍԱ ԵՒ ԱՆԳԼԻԱ

Անգլիացի լթղթակից մը տեսակցեր է Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան մէկ բարձրաստիճան պաշտօնատարին հետ, ի մասին հակ-անգլիական ընթացքին զոր ֆրանսական դիւանագիտութիւնը բռնեց եգիպտական խնդրոյն վերջին բանակցութեանց մէջ։

Թղթակիցը հարցուցեր է. «Ի՞նչ է ձեր կառավարութեան կարծիքն անգլօ-թուրք Պայմանագրոյն և եգիպտ. խնդրոյ կարգադրման մասին։

—Պաշտօնեայն պատասխաներ է. «Մեր տեսութեամբ, յանցանքն անգլ. կառավարութեան է Պայմանագրոյն չյաջողելուն մասին, մանաւանդ Սըր Հ. Ուոլֆի. Բանակցութեանց սկիզբն, որոշուած էր թէ ամեն բան իմաց պիտի տրուէր Ֆրանսայի դեսպանին. Բայց ի՞նչ [illegible]

[illegible]

—Պաշ. Ռուսիա մեզմէ անկախաբար կը գործէր. Սխալ է կարծել թէ մեք Ռուսիոյ օգնութիւնը խնդրեր ենք ի դերեւ հանելու համար Պայմանագիրը։

—Թղթ. Ի՞նչպիսի կարգադրութիւն [illegible]

[illegible]

պաշտպանելու համար ընդդէմ Սուլտանի Արաբաց։»

Ֆրանսացի պաշտօնեայն յաւելեր է նաև թէ, իւր կարծեօք, Եգիպտոսի խնդրոյն վրայ բանակցութիւնք պիտի վերսկսին, և թէ Սըր Հ. Ուոլֆի Կ. Պոլսէ մեկնումը վերջնական խզում չի նշանակեր։

### ՖՐԱՆՍԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պորտոյի գերմանական հիւպատոսարանի մէկ պաշտօնեայն կը գրէ գերման լրագրի մը թէ Պորտոյի մէջ բուռն թշնամութիւն կը ցուցուի Գերմաններուն. Յուլիս 14ի ազգային տօնին նախընթաց օրն, հիւպատոսարանը կուգայ անստորագիր նամակ մը, որ կը [illegible]

[illegible]

նոր բաժակին. Զայս տեսնելով, ներկայ Ֆրանսացիք, երբ 200 անձինք, խնդագին աղաղակներ արձակեր են, «Կեցցէ՛ Ռուսիա, Ֆրանսայի բարեկամն» պոռալով. —Այսպիսի մանր մունր դէպքեր կը ցուցնեն ըստ բաւականին թէ ֆրանքօ-ռուս բարեկամութիւնն հետզհետէ արմատ գտնելու վրայ է երկուց ժողովրդոց սրտերուն մէջ։

Ժէրօմ Նաբոլէոն Իշխանն ի մօտոյ գիրք մը պիտի հանէ, Ֆրանսացի իմաստասէր Պ. Դէնի ջախջախիչ քննադատութեանց դէմ պաշտպանելու համար զՄեծն Նաբոլէոն։

### ՌՈՒՍԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսիոյ Սինոդին Մեծ Պրօկուրօրին Դիւանապետը, Պ. Սապլէր, հրաման ստացաւ երթալ Դաւրիտեան (Խըրիմու) նահանգն և Քիէվի նահանգը, տեղւոյն վրայ քննելու համար այդ նահանգաց գիւղացիներուն մէջ Բողոքականութեան աճման պատճառներն, և այս շարժումը զսպելու նպատակաւ [illegible]

[illegible]

ՀՆԴԻԿՔ ԵՒ ԱՆԳԼԻԱ. [illegible]

[illegible]

ԻՏԱԼԻԱ. [illegible]

[illegible]

—)( 4 )(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

# ԺԻՒԼ ՄԱՌԻ

## ԹԷՌԷԶ

### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

#### ԺԱԳ ԵՒ ԺՈՒԺ

Ամբողջ ամիս մը, բովանդակ Սոլոնեըն և շրջակայ գաւառները լցուեցան ոստիկաններով, որք աչերնին չորս բացած էին, ականջնին ամեն բանի ունկնդիր։

Մոնդաւալ և Վալ-Ռոբանի կոմսը Թրը[illegible]

[illegible]

(Շարունակելի)

